

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ԲՆՆԱՐԿՈՒՄ

ԴՎԻՆ-ՊԱՐՏԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՇԱՐՈՒՐԻ ԴԱՇՏ-ՍՈՒԼԵՄԱ
(ՍԵԼԻՄԻ) ԼԵՌՆԱՆՑՔ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա. Ա. ՋԱՐՅԱՆ

Պատմական Հայաստանում առևտրական, ռազմավարական և մշակութային կապերի տարածման իմաստով կարևոր նշանակություն է ունեցել Սյունիքով անցնող Դվին—Պարտավ մայրուղին: Այս մայրուղին հիշատակել են մի շարք պատմիչներ՝ մասնավորապես Ստեփանոս Օրբելյանը և որոշ արաբ հեղինակներ: Մեր ժամանակներում այն ուսումնասիրել են Չ. Մանանդյանը, Թ. Հակոբյանը, Ս. Երեմյանը, Բ. Հարությունյանը, Ա. Ղարաբյոզյանը: Այս աշխատություններում ճշտվել է մայրուղու ընթացքը, վերականգնվել են գյուղավանների, բնակավայրերի և կայանների պատմական անունները, սակայն շատ քիչ է խոսվում ճանապարհին հարակից և նրա պաշտպանական համակարգի մասը կազմող ամրոցների և բերդերի մասին: Ճանապարհները, լինելով հաղորդակցության միջոց, միևնույն ժամանակ ծառայել են որպես թշնամու ներխուժմանը դիմակայելու գլխավոր ուղղություններ: Այս հանգամանքից ելնելով՝ բոլոր ժամանակներում հաղորդակցության ուղիները ամրացվել են հուսալի պաշտպանական համակարգերով: Բացառություն չի կազմում նաև Դվին—Պարտավ մայրուղին, որի բոլոր ճյուղավորումներում և կարևոր հանգույցներում գոյություն են ունեցել ռազմապաշտպանական համակարգեր և պաշտպանական հանգույցներ:

Կարևոր համարելով ուսումնասիրել Դվին—Պարտավ ճանապարհի Վայոց ձորով անցնող ճանապարհահատվածի (Շարուրի դաշտ (Բաշնորաշեն)—Սուլեմա (Սելիմի) լեռնանցք) պաշտպանական համակարգի մաս կազմող բերդամրոցները, 1987 թվականի օգոստոս ամսին ձեռնարկեցինք հետազոտական գիտարշավ¹, որը նպատակ ուներ ստուգել ճանապարհի 92 կմ երկարություն ունեցող գծամասը և որոնել ու ուսումնասիրել մինչև օրս պահպանված պաշտպանական կառույցները: Ճանապարհի զգալի հատվածը անցնում էր Վայոց ձոր գավառով, որն սկիզբ առնելով Շարուրի դաշտից, ընթանում էր Արփա գետի հունով դեպի հյուսիս-արևելք և Արենի գյուղավանի² մոտից անցնելով՝

¹ Արաբ հեղինակներից հատկապես հետաքրքիր են ալ-Իսթահրիի և ալ-Մուքաթասիի տեղեկությունները (տե՛ս Բ. Հ. Հարությունյան, Դվին—Պարտավ ճանապարհի Sisajāt-Gēlakūni գծամասը, «Պատմա-քառասիրական հանդես», Եր., 1968, № 1, ծանոթագրություն 6, 7):

² Գիտարշավի կազմակերպողներից և մասնակիցներից է եղել պատմական գիտությունների թեկնածու Արմեն Հարազոյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը՝ ցույց տված աջակցության, խորհուրդների և ցուցումների համար:

³ Ա. Տ. Երեմյանն այն համարում է Արփանեալ ավան: «Հայաստանը ըստ «Աշխարհ Հայոց»-ի, Եր., 1968, էջ 41:

հասնում էր Գետափի և Եղեգնաձոր ավանների մոտ, որտեղից, Արփա և Եղեգիս գետերի ջրախառնման անկյունի մոտից, ուղղվում էր դեպի հյուսիս և հասնում Սուլեմա լեռնանցք, այնուհետև Կոթ ավանից ընթանում դեպի Պարտավ (տախտակ 1, գծ. 1): Ուսումնասիրողները տարբեր կարծիքների են Դվինից մինչև Կոթ ճանապարհի ընթացքի վերաբերյալ: Ըստ Հ. Մանանդյանի⁴ Դվին—Պարտավ ճանապարհն ուներ երկու ճյուղ, որոնք դուրս գալով Դվին քաղաքից՝ մեկն ուղղվում էր դեպի հյուսիս-արևելք, Ելենովկայի և հին Բերդկունքի վրայով, մյուսը՝ հարավ-արևմուտք, Բաշնորաշենի և Սելիմի լեռնանցքով, և միանալով Կոթ կայանում՝ կազմում էին միասնական ուղի և ընթանում դեպի Պարտավ (Բարդա): Կոթից—Պարտավ ճանապարհը անցել է մոտավորապես իրարից միկնույն հեռավորությամբ տեղադրված Ձող (Սոտք), Հարթեք (Հաթրիս), Կաղանկատույք (Գալանգատուս) կայաններով: Բ. Հարությունյանը համարում է, որ Դվին—Պարտավ ճանապարհն ունեցել է հետևյալ ուղղությունը. Դվին—Շարուրի դաշտ՝ Բաշնորաշեն, որտեղից այն բաժանվել է Նախիջևան և Պարտավ ուղղությունների, այնուհետև՝ Բաշնորաշեն—Ուլյա-նորաշեն—Արփա—Այնաձոր—Շատին), մեր կարծիքով, ամրոցների տեղաբաշխումից ելնելով, հնարավոր է Արփայից գետի հունով դեպի գետափ (Ղոյթուլ)—Քեշիշքենդ (Եղեգնաձոր)—Սելիմի լեռնանցք (տախտակ 1, գծ. 2)⁵:

Հ. Մանանդյանի նշած հյուսիս-արևելյան ճյուղը, շնայած քննարկվող ճանապարհին պատկանելու տարակարծությանը, միջին դարերում բանուկ է եղել և օգտագործվել է որպես Գեղամա լճի արևմտյան ավազանի բնակավայրերը Կոթ կայանի հետ հաղորդակցելու միջոց, ուստի անկախ նրա Դվին—Պարտավ ճանապարհի մասը լինելուն, նպատակահարմար ենք գտնում ակնարկել նաև նրա պաշտպանական կառույցները: Հյուսիս-արևելյան ճյուղն ուներ հետևյալ ուղերթը. Դվին—Երևան—Ելենովկա—Բերդկունք—Նոր-Բայազետ—Կոթ: Սյունիքի Գեղարքունիք գավառով անցնող Ելենովկա—Կոթ—Սելիմի լեռնանցք հատվածը սկիզբ էր առնում Գեղամա լճի հյուսիս-արևմտյան մասում գտնվող Ելենովկա ավանից և անցնելով 25 կմ դեպի հարավ, լճի ափամերձ շրջանով հասնում էր Բերդկունք Բերդավանին⁶ (կայանին), որի տարածքում գտնվում են այժմ կիսավեր վիճակում պահպանված Աղկալա (Սպիտակ բերդ, Գեղարքունոյ բերդ, բերդ Գեղէ) ամրոցի ավերակները⁷, որը Դվինից գտնվում էր 115 կմ. հեռավորության վրա: Աղկալա ամրոցի տարածքում, Ազատ քաղաքի մոտ եղել է քարավանատուն և իջևանատուն, որը վկայում է այն մասին, որ ափամերձ ամրոցը եղել է առևտրական ճանապարհին կառուցված ռազմական ամրոց-կայան:

Բերդկունքից դեպի հարավ-արևելք ճանապարհն ընթանում էր Գեղամա լճի ափից քիչ հեռու և լճի հարավ-արևմտյան հատվածում հասնում Կիլ-Կույ կամ Gelakuni (Գելաքունի), որտեղ Կոթ իշխանանիստ գյուղաքաղաքի մոտ, երբեմնի գոյություն է ունեցել բերդ: Ամրոցի մոտով անցնելիս ճանապարհը բաժանվել է հարավային՝ դեպի Վայոց ձոր, և արևելյան՝ դեպի Պարտավ, ուղղությունների:

Մեզ հետաքրքրող ճանապարհն սկիզբ է առնում Շարուրի դաշտից՝ Բաշնորաշեն ավանի մոտից, որտեղ Այրարատ և Սյունիք նահանգների սահմա-

⁴ Հ. Մանանդյան, Երկեր, Բ. Ե, Եր., 1984, էջ 206:

⁵ Բ. Հարությունյան, Եզվ. աշխ., (տե՛ս գծագրերը):

⁶ Բերդկունքի մասին տե՛ս Հ. Մանանդյան, Եզվ. աշխ., էջ 193—198: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986, էջ 871:

⁷ Ըստ Ս. Բարխուդարյանի, Աղկալա ամրոցը միակ միջնադարյան բերդն է Աղմաղանի լեռնաշղթայի արևելյան կողմում: Տե՛ս Հ. Մանանդյան, Եզվ. աշխ., էջ 198:

նամերձ գոտում և Վայոց ձոր գավառի հարավ-արևմտյան դարպասին մինչ օրս պահպանվել են Արբա (Ղարա-Քափա) ամրոցի ավերակները (տախտակ 3, նկ. 1): Ամրոցը գտնվում է Շարուրի դաշտի և Վայոց ձորահովտի բարձրաբերձ, երկկողմանի ժայռերով շրջապատված դարպասի մոտ գտնվող բնական, կղզիանման բլրի գագաթին: Չոր մտնելով, ճանապարհը ընթանում է դեպի հյուսիս և անցնում 16 կմ. հեռավորությամբ գտնվող Վայս (Ղալա) ամրոցի մոտով (տախտակ 3, նկ. 3, 4): Տեղացիներն այս ամրոցը կոչում են Վեյսալի և քանի որ այն ունի երկու ժայռալանջ գագաթներ, այն կոչում են նաև Փոքր Ղալա և Մեծ Ղալա: Վայսը գտնվում էր երբեմնի Տանձիկ (այժմ այն մնացել է գյուղի և հին գերեզմանոցի տարածքներում կառուցված արհեստական ջրամբարի հատակում) գյուղի մոտակայքում, ճանապարհի ձախ մասում: Մենք ուսումնասիրեցինք տարածքը և թեքադիր ապառաժե լանջերով կազմված ամրոցատեղին, սակայն պարսպապատերի հետքեր չհայտնաբերեցինք: Այս երկու գագաթները գերիշխող դիրք ունեն, որտեղից պարզ երևում է Վայոց ձորի հարավային հատվածը մինչև Շարուրի դաշտ: Ինչպես հաստատում է Բ. Հարությունյանը, այս ամրոցատեղին նշանավոր Վայս ամրոցն է՝ Հեղինակը Վայս ամրոցի տարածքում է տեղադրում Սիսաջանը⁸: Այս հարցի վերաբերյալ կան ևս երկու կարծիքներ: Թ. Հակոբյանը Սիսաջանը տեղադրում է Արենի գյուղի տեղում⁹, Հ. Մանանդյանը և Կարառուփը այն համարժեք համարում են Կիսաջանին և տեղադրում են Բաշնորաշենում¹⁰:

Մեր քննարկման ոլորտից դուրս է տվյալ հարցի մեկնաբանումը, սակայն տեղանքի քննությունից ելնելով, առավել հավանական ենք կարծում Հ. Մանանդյանի տեղադրությունը, այսինքն՝ Բաշնորաշեն—Սիսաջան տարբերակը: Վայսից ճանապարհը թեքվում է դեպի արևելք և ընթանում դեպի Արենի (Արփանյալ ավան): Տանձիկ և Արենի գյուղերի միջև, Արենիից մոտ 4—5 կմ. հարավ-արևմուտք, ճանապարհի ձախ մասում գտնվում է ևս մեկ ամրոց, որին տեղաբնակները սբ. Կարապետ են կոչում, նրանից ոչ հեռու բարձունքի վրա, այժմ կիսավեր, փոքր եկեղեցու անունով: Այս ամրոցի մասին պատմական տեղեկություններ չենք հանդիպել, ուստի դժվար է որևէ ստույգ մեկնաբանություն տալ: Ամրոցից այսօր պահպանվել են բլրի գագաթը եզրափակող սլարպապատերի ստորին մասերը, մի քանի աշխարհիկ բնույթի սենյակների ավերակներ, որոնք շարված են միջին շափերի քարերից, առանց շաղախի: Սբ. Կարապետ ամրոցից արևելք, նրանից մոտ 2 կմ. հեռավորության վրա է գտնվում Արփա ամրոցի ավերակները: Ամրոցը գտնվում է գյուղի հարավ-արևելյան կողմում, Ուփի ձորի ձախ ափին: Պահպանվել են պարբսպապատի ստորին հատվածները՝ շարված անմշակ քարերից, առանց շաղախի: Արփա ամրոցի մոտից ճանապարհը ընթացել է դեպի արևելք, գետի ձախ ափով, այնուհետև թեքվել է հյուսիս՝ Արփա և Եղեգիս գետերի միախառնման անկյուն և անցել Ղըզըլ-Ղշաղ ավանից ոչ հեռու¹¹: Այս հատվածում երբեմնի համանուն գյուղի (այժմ լքված) հարավում գտնվում են էրթիչ (էրդեչ, Հերթիչ) ամրոցի ավերակները, որտեղ և պահպանվել են Ջրո վանք անունով եկեղեցու ավերակները: Ճանապարհի պաշտպանական համակարգի մաս կազ-

⁸ Բ. Հարությունյան, Աշխ., էջ 217—218:

⁹ Նույն տեղում, էջ 217—220:

¹⁰ Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Եր., 1966, էջ 93—95:

¹¹ Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտիգեորյան քարտեզի, Եր., 1936, էջ 184—195:

¹² Բ. Հարությունյանը ճանապարհի այս հատվածը այլ կերպ է ուղղում, որի համաձայն Արփայից այն ընթանում էր դեպի Աղավճաձոր, Քեոտ ձոր թեքվում հյուսիս՝ դեպի Ծատիկ գյուղը:

մող մյուս ամրոցը գտնվում է ներկայիս Գետափ գյուղի (Խոտորալեզ) հյուսիսային կողմում, Եղեգիս գետի աջ ափին: Այս ամրոցը տեղաբնակները կոչում են Կրզ-Կալա, որը պատմական Ասյանա ամրոցն է: Նախքան ճանապարհի հյուսիսային ընթացքին հետևելը, ցանկանում ենք նշել, որ Արփա և Եղեգիս գետերի ջրախառնման անկյունը, որտեղ քննարկվող ճանապարհը բաժանվել է արևմտյան-Սիսաջան և արևելյան-Արցախ հյուղերի, հանդիսացել է խիստ կարևոր ստրատեգիական հանգույց: Այն պաշտպանված է եղել 6 ամրոցներից կազմված փակ օղակից, որը բոլոր կողմերից հսկում և պաշտպանում էր ինչպես ճանապարհների խաչմերուկը, այնպես էլ Խոտորալեզ, Նորաշեն, Գետափ, Աղավնաձոր, Ագարակաձոր, Շորժա ավանները:

Հանգույցից աջ, հյուսիսից հարավ տեղադրված են Նորաշեն (Վարդան բերդ— ըստ Ստ. Օրբելյանի), Քյոշք (տախտակ 3, նկ. 7), Ագարակաձոր (տախտակ 3, նկ. 5, 6), Շորժա, էրդեշ և Ապանա ամրոցները (տախտակ 1, գծ. 2): Ամրոցներով շրջափակված այս հանգույցից հետո ճանապարհը բարձրացել է դեպի հյուսիս և անցել Ալիխան—Պայասի, Հասան—Քենդ, Սալլի, Քարագլուխ և Աղքենդ (Աղնջաձոր), որտեղից այն դուրս է եկել Վայոց ձորի հյուսիսային դարպասի պահակամրոց Սուլեմա Բերդ (տախտակ 3, նկ. 8) և այնուհետև Գեղարքունիք գավառ՝ մինչև Կոթ: Սելիմի լեռնանցքից հյուսիս և հարավ, ճանապարհին անմիջապես հաղորդակից տեղադրված են երկու քարավանատուն: Սուլեմա բերդից մոտ 5 կմ. հարավ Աղքենդի քարավանատունն է, իսկ նույն հեռավորությամբ դեպի հյուսիս՝ Սելիմի քարավանատունը: Վերջիններս ունեցել են առևտրական նշանակություն և ծառայել որպես քարավանների իջևանատեղի-պատսպարան: Այս կառույցներն ունեցել են նաև պաշտպանական նշանակություն, քանի որ պատմությունից հայտնի են դեպքեր, երբ ավազակախմբերը թալանի համար հարձակվել են քարավանների վրա և կողոպտել ավարը: Այս կարծիքը հաստատում է նաև այն փաստը, որ քարավանատները ունեն պաշտպանական կառույցներին բնորոշ տարրեր՝ բուրգեր, պատնեշ-պատեր, մեկ մուտք, զուրկ են կողային բացվածքներից: Մեր կողմից ուսումնասիրված ճանապարհին հաղորդակից տեղադրվել են քարավանատներ հետևյալ ավանների մոտ՝ Բաշնորաշեն, Հարժիք, Աղավնաձոր, Լեռնակերտ, Կոթ, Ազատ (տախտակ 1, գծ. 2):

Այսպիսով, ակնհայտ է դառնում մի կարևոր պաշտպանական համակարգի իսկությունը, որը կառուցապատված էր պաշտպանական հենակետերի խիստ ցանցով և քարավանատներով, որոնք գտնվում էին իրարից որոշակի հեռավորության վրա, կախված նաև ցերեկային ճամփորդության տևողություններից¹³:

Այլ է բերդերի տեղադրության սկզբունքը ճանապարհի ամրոցը երկաթուղիով: Ամրոցները տեղադրված են հետևյալ սկզբունքներով. ա) ամրացված են ճանապարհների խաչմերուկները (Կոթ, Եղեգնաձոր, Բաշնորաշեն), բ) գյուղավանները (Կոթ, Քարանլուխ, Գետափ, Եղեգնաձոր, Ագարակաձոր, Արենի, Տանձիկ, Բաշնորաշեն), գ) լեռնանցքները և դարպասները (Սելիմ, Արբա), դ) մնացած պաշտպանական կառույցները դիրքորոշված են ճանապարհի երկայնքին գոյություն ունեցող բնական խոշոր գետերի գագաթներին, որը մի կողմից ապահովում էր ամրոցի անառիկությունը և հնարավորություն տալիս պաշտպանական կառույցի փոքրածավալ շինարարությունը, մյուս կողմից հսկողության տակ էր առնում գետահովիտների առանձին շրջանները:

¹³ Բ. Հարությունյանը, համաձայն ճանապարհի երկայնքով տեղադրված քարավանատների, Սիսաջան—Գեղարքունի ճանապարհահատվածը բաժանում է 3 անցումների (ճշվ. աշխ., էջ 219):

Ճանապարհին կառուցված ամրոցների ու բերդերի ընտրված տեղանքներում՝ ճարտարապետաշինարարական դիրքադրության առումով այստեղ՝ որպես Սյունիքի պաշտպանական կառույցների ավանդական միջոց, օգտագործվել են բնականից անառիկ և տարածքի նկատմամբ բարձրադիր, ժայռագագաթ հրվանդաններն ու սարաոստները: Ամրոցաշինական և պաշտպանական կառույցների ռազմաշինարարական հորինվածքի սկզբունքների վերլուծության իմաստով, մեր պարագայում, ցավոք, հնարավոր են լուկ ենթադրություններ, քանզի պահպանված և նաև բոլորովին կործանված ամրությունների զննությունը բավարար չէ ճշգրիտ եզրահանգումներ անելու համար:

Այժմ անդրադառնանք ուսումնասիրվող ճանապարհի պաշտպանական համակարգի մաս կազմող ամրոցների պատմական, շինարարական և ռազմական բնութագրերին:

ԱՐՐԱ (Ղարա Քափա կամ Ուլյա-Նորաշեն) ամրոց: Ինչպես ասացինք, Ուլյա-Նորաշեն ամրոցը հանդիսացել է Շարուրի դաշտից դեպի Վայոց ձոր գավառ ընթացող անդնդախոր կիրճի ռազմական հենակետը՝ դարպասը: Տեղաբնակները (այժմ՝ ադրբեջանցիներ) այն անվանում են Ղարա Քափա: Ամրոցը ներկայումս գտնվում է Նախիջևանի ԻհՍՀ Իլիշի շրջանի Ուլյա-Նորաշեն (Վերին Նորաշեն), պատմական Նորաշեն գյուղի մոտ, Արփայի լեռնանցքի դարպասում, Շարուրի գաշտի սկզբնամասի հարթավայրի հյուսիսում, առանձին կանգնած մի մեծ շրջանաձև բլրի գագաթին: Արբա ամրոցը հիշատակել են Սղիշեն¹⁴ և Սեբեհուր¹⁵: Այսօր պահպանվել են բլրի գագաթը շրջափակող և տարբեր բարձրություններ ու երկարություններ ունեցող պարսպապատերի, բուրգերի և պաշտպանական ու տնտեսական նշանակություն ունեցող տարբեր կառույցների ավերակներ (տախտակ 2, գծ. 1): Ամրոցը իր միջնաբերդով գրավում է մոտ 1 հա տարածություն: Այստեղ պահպանված կրկնաշարի շարվածքով իրականացված աշտարակներն ու պարիսպները (տախտակ 3, նկ. 1) վկայում են նրա մ. թ. ա. 2-րդ հազարամյակին պատկանելու: Որոշ մասերում պարիսպների բարձրությունը հասնում է 2,5 մ., հաստությունը 3 մ., իսկ առանձին քարերի երկարությունը՝ 1,5—2,5 մ., որոնք իրար հետ կապակցված չեն շաղախով: Ըստ Ա. Այվազյանի¹⁶, ամրոցը վերակառուցվել է ուրարտական շրջանում, որի ժամանակ միջնաբերդի շուրջ տարածվել է բնակելի մի ընդարձակ թաղամաս: Այստեղ նկատվում են եռաշերտ պարիսպներ, որոնք հաջորդում են մեկը մյուսին ամենից խոցելի մասերում: Բլրի գագաթն ունի երկու բարձունք, որոնք կառուցապատված են ուղղանկյուն հատակագծով տարբեր բնույթի սենյակներից: 1987 թ. ամռանը տեղում կատարած մեր կարճատև ուսումնասիրությունները, որին խանգարեցին տեղաբնակ ադրբեջանցիները, չբացահայտեցին միջին դարերին պատկանող շինարարական շերտեր. (հայտնաբերվել են բազմաքանակ միջնադարյան խեցեղենի մնացորդներ): Ա. Այվազյանը նշում է, որ 1915—17 թթ. Նորաշեն և շրջակա այլ գյուղերի բնակիչները այստեղ կազմակերպել են պաշտպանական դիրքեր և քանդել են շինությունների մի զգալի մասը: Կարծում ենք, որ այսպիսի կարևոր ռազմական հենակետում, արդեն հազարամյակներ առաջ հիմնված ամրոցը, չէր կարող անուշադիր մնալ Սյունյաց իշխանների ամրոցաշինական գործունեությունից, մանավանդ որ այս ամրոցը եղել է նահանգի հարավ-արևմտյան դարպասը:

¹⁴ Սղիշեի Վարդանանց պատմությունը, Եր., 1958, էջ 84:

¹⁵ Սեբեհու Սպիսկոպոս, Պատմություն Հերակի, Եր., 1939, էջ 142—143:

¹⁶ Ա. Այվազյան, Արբա և Մառուկ բերդերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1976 թ., № 9, էջ 88—89:

ԱՐՓԱ (Արենի) ամրոց: Արփա կամ ինչպես Ծղիշեն է կոչում «Արբանեալ աւան» բնակատեղիի առևտրական և վարչական կարևոր նշանակության մասին արդեն խոսվել է: Այժմ անդրադառնանք ամրոցին: Ամրոցն իր տեղադրության մասին շատ կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ այն հանդիսացել է դեպի Շարուրի դաշտ գնացող կիրճի մուտքի դարպասը հսկող պաշտպանական կառույցը: Կիրճի մյուս ծայրում, ինչպես տեսանք, Արբա (Ղարա Թափա) ամրոցն է, որը Շարուրի դաշտից դեպի Վայոց ձոր ընթացող ճանապարհի մեկ այլ դարպասն էր: Ուստի, կիրճի երկու մուտքերը կամ երկու ելքերը ամրացվել են պաշտպանական կառույցներով, որոնք հսկել են այս տարածքում գոյություն ունեցող միակ հաղորդակցության ուղին, որի երկայնքին պարբերաբար տեղադրված են եղել այլ նշանակության բերդեր ու ամրոցներ (Սբ. Կարապետ, Վայս):

Արփա ամրոցի մասին հիշատակություն ունի Սեբեոսը. «Կալալ գրերդն Արփայս»¹⁷: Ստ. Օրբելյանը բերդը հիշատակում է որպես Օրբելյան տոհմի Սմբատ իշխանի նստավայր 1273 թվ. հետո. «Յետ բազում բարեպաշտութեանց եւ երեւելի գործոյ, լցեալ զկէտ կենաց իւրոց վախճանի յիւրում գարապասին յԱրփայ...»¹⁸: Տարսայիճի օրոք, Ամաղու Նորավանքի Սարգիս Եպիսկոպոսի նախաձեռնութեամբ, ավանի մոտ, Արփա գետի վրա կառուցվում է եռակամար մի կամուրջ, որն այսօր ավերակ է: Նույն Տարսայիճը այստեղ 13-րդ դարում կառուցում է «նստոց» բերդ, այսինքն՝ ապարանք: Արփայից հյուսիս (այժմ՝ Արենի) 1321 թ. Մոմիկ ճարտարապետը կառուցել է սբ. Աստվածածին գմբեթավոր եկեղեցին: Ինչպես տեսնում ենք, Արփա ավանի ողջ շրջակայքը հարուստ է պատմական հուշարձաններով, որը վկայում է նաև նրա իշխանանիստ ավան լինելու մասին: Ստ. Օրբելյանը բերդը անվանում է «դարպաս», որը և ճշգրիտ բնորոշում է նրա ռազմական նշանակության մասին:

Արփա բերդի ավերակները այժմ հազիվ նշմարվում են հին Արփա (Արենի) գյուղի ավերակներից քիչ հարավ-արևելք, Ուփի ձորի ձախ կողմի բարձունքի վրա: Այստեղ պահպանված պարսպապատերը շարված են անմշակ մեծ քարերից, առանց շաղախի:

ԷՐԴԵՉ ամրոց: Էրդեշ կամ Էրթիշ ամրոցի ավերակները գտնվում են Ծղեգնաձոր շրջկենտրոնից 3 կմ. հարավ-արևմուտք, Էրտիշ լեռնաճյուղի բարձրադիր, ժայռալանջ լեռան կատարին, պատմական Էրդեշ գյուղից¹⁹ քիչ հարավ: Ամրոցի մասին տեղեկություն է հաղորդում Ղ. Ալիշանը. «և առ բերանով նորին յԱրփայ՝ հին գեօղն էրդէշ, այժմ թուրքաբնակ, գեղեցկադիր և սօսիատունկ, ի հարաւոյ կողմանն ունելով բերդ ւաւերակ ի գագաթան քարաբլեր և գերեզմանս խանգարեալս, յորս խնդրելի են արձանագրութիւնք: — Յելից հարաւոյ գեղջն ի քարաբլրի ուրեք կայ ւաւերակ այլոց հին բերդի, որ կոչի այժմ յանուն Շիրալի խանի, և առ ըստորոտով նորին յարեւելից կուսէ՝ ւաւերակք տանց և գերեզմանք անգիրք, որպէս և ի Հս. կուսէ մնացածք բնակարանաց, դուռն, քարեղէն սանդուղ ելից ի բերդըն. յայսմ կոշման ածեալ է և պարիսպ կրաշաղախ. քանզի յայլոց երից կողմանց անմատուց է քարաբլուրն. տասնիվ շափ սենեակք են ի բերդին և ջրամբար»²⁰: Պատմիչի այս տեղեկությունները հաստատում են այսօրվա՝ գյուղից հարավ գտնվող բերդի ավերակները, որոնց տարածքում կան նաև Զրո վանք կոչված փոքր եկեղեցու,

¹⁷ Սեբեոս Եպիսկոպոս, Աշվ. աշխ., էջ 142:

¹⁸ Ստ. Օրբելյան, Պատմութիւն Արմենիայի Սիսական, հտ. Բ, 1859, էջ 177:

¹⁹ Գյուղը հիշատակել է Ստ. Օրբելյանը Տաթևին տրվող հարկացուցակում (Աշվ. աշխ., էջ 995):

²⁰ Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 179:

գերեզմանոցի և այլ կառույցների մնացորդներ: Ամրոցը գրավել է փոքր տարածք և զբաղեցրել է Արփայի գետահովտի ձախակողմյան բարձրադիր լեռնաճյուղի բնականից երեք կողմից անառիկ լեռնաժայռի զագաթը: Ինչպես պատմիչն է նշում, այստեղ պահպանված պարսպապատերի ոչ բարձր հատվածները կառուցվել են կրաշաղախով, իսկ պատերի մակերեսները իրականացված են կիսամշակ որձաքարերից: Պարսպապատերի հատակագիծը դրժվար է վերարտադրել՝ առանց համապատասխան պեղումների և ուսումնասիրությունների:

ՆՈՐԱՇԵՆ ամրոց (Վարդանի բերդ): Ապանա ամրոցից մոտ 3—4 կմ. հարավ-արևելք, Եղեգիս գետի ձախ ափին Գլաձոր գյուղի տարածքում այժմ պահպանվել են Վարդանի բերդ ամրոցի ավերակները: Ամրոցի մասին հիշատակություն ունի Ղ. Ալիշանը. «... Օրթաբէնտ, նոյնպէս վայելուչ դրիւք, և իբր 50 տամբք են և առ թովաւ մնացուածք հնութեան, աւերակ բրգաւոր շինուածոյ Ի Մ. ՀՐ. Վարգանի բերդ կոչեցեալ. խաչվէմ մի ԶԿ թուականաւ (1311). և այլ խաչարձան ի բարձրաւանգակի...»²¹:

Ավերակները այսօր պահպանվել են բարձրադիր բլրի գագաթին, տեղտեղ ընթացող պարսպապատերի ձևով, որոնք ունեն բրգաձև հիմնապատեր: Ըստ Հ. Մ. Հովհաննիսյանի, բերդն իր անունն ստացել է Օրթելյան Ելիկումի որդի Վարդանի անունից²²:

ԱՊԱՆԱ ամրոց: Գտնվում է Աղավնաձոր (Այնաձոր) գյուղից 4 կմ. արևելք, Արփայի վտակ Ապանա գետակի հովտում, ճանապարհից դեպի արևմուտք, բարձրադիր բլուրի գագաթին: Համանուն գյուղի միակ հիշատակությունը պատկանում է Ստ. Օրթելյանին, Տաթևին տրվող հարկացուցակի կապակցությամբ: Ապանա ամրոցը և գյուղը թուրքաբնակ շրջանում հիշատակվել են Կրդ-Կալա անունով: Այժմ գյուղը և ամրոցը ավերակ և ամայացած են: Ամրոցատեղի տարածքում կան բազմաթիվ կառույցների և պարիսպների հիմքերի ավերակներ, որոնք վկայում են այստեղ ամրոց լինելու մասին, բայց չեն կարող պատկերացում տալ նրա հորինվածքի և տիպի վերաբերյալ: Ամրոցապատ բլուրը գերիշխող դիրք ունի, որտեղից լավ երևում է նրա ստորոտով անցնող քննարկվող ճանապարհը: Ամրոցի հատակագծի և հորինվածքի մասին կարելի է գաղափար կազմել միայն հնագիտական պեղումներից հետո:

ՇԱՏԻՆ ՎԱՆՔ վանքամրոց: Այս վանքամրոցը մեզ հետաքրքրում է այն առումով, որ եկեղեցին, պարիսպները և որոշ աշխարհիկ բնույթի կառույցները, հիմնված լինելով 17-րդ դարում, իրենց դիրքադրությամբ և ռազմաստրատեգիական ճանապարհին հարակից լինելով, կազմել են մայրուղու պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մասը: Վանքամրոցը տեղադրված է հյուսիսից՝ Սուլեմա և հարավից՝ Ապանա ամրոցների միջև, ճանապարհից աջ և փաստորեն լրացուցիչ պաշտպանական հենակետ է այս ուղղության վրա (տախտակ 1, գծ. 2):

Վանքամրոցը տեղադրված է Շատին գյուղից 4 կմ. արևելք, Եղեգիս գետի ձախ ափին, բարձունքի վրա: Ծռանավ բազիլիկ սբ. Սիոն եկեղեցին, որը կառուցվել է 1655 թ., գտնվում է համալիրի կենտրոնական մասում: Շատինի վանքը հիմնվել է 929 թ. կառուցված մեկ այլ եկեղեցու տեղում, որի մասին հիշատակություն ունի Ստ. Օրթելյանը²³: Վանքը շրջապատված է ուղղանկյուն հատակագիծ ունեցող պարիսպներով, որոնք հարավային մասում ամրացված են երեք կիսաշրջանաձև աշտարակներով (տախտակ 2, գծ. 2):

²¹ Նույն տեղում, էջ 129:

²² Հ. Մ. Հովհաննիսյան, Աշխ., էջ 488:

²³ Ստ. Օրթելյան, Աշխ., էջ 258:

Պարսպապատերի ներսում պահպանվել են որոշ շինությունների հետքեր, իսկ ամբողջ հարավային կողմի Երկարությունը, պարսպապատին կից ընթանում են ուղղանկյուն, թաղակապ սենյակների շարք: Վանքամրոցը ունի երկու մուտք՝ արևելքից և արևմուտքից: Այժմ պահպանվել է արևմտյան, թաղակապ, սլաքածե մուտքը, որից հյուսիս, ներսի կողմից, պարսպին անմիջապես հպված, կառուցվել է քառանկյուն հատակագծով պահակակետը, որից այժմ պահպանվել են միայն պատերի ստորին հատվածները: Ըստ Մ. Հասարթյանի, պարսպապատերը ժամանակակից են եկեղեցուն²⁴: Վանքամրոցի՝ մեր կողմից ուսումնասիրվող ճանապարհին կից լինելու և դրա շնորհիվ առևտրական ու մշակութային կապերի մասին է խոսում այն փաստը, որ ամրոցը սերտ կապերի մեջ էր Ջուղայի հետ: Վանքամրոցի պարսպապատերը տեղանքին հարմարեցված ու դիրքորոշված են շատ հմտորեն և ռազմական պայմաններին բնորոշ: Վանքամրոցին կարելի է մոտենալ միայն հարավից՝ Օղեգիսի ձորից, ուր թշնամու առաջ, բարձունքի վրա հայտնվում են ուղղագիծ պարիսպները: Պարսպապատերի պահպանված մասերի առավել բարձրությունը 3,5—4 մ. է, հաստությունը 1,5—1,8 մ. է: Բացի հարավային ուղղագիծ պարիսպներից, մնացած բոլորը կառուցված են կիսամշակ, միջին չափերի քարերից, կրաշաղախի միջնաշերտով: Հարավային պարսպապատի արտաքին երեսապատը իրականացված է սրբատաշ քարերից՝ հորիզոնական կարանների հստակ պահպանմամբ, որը և վկայում է այս հատվածի հետագայում վերանորոգման մասին: Հարավային պարսպապատի ամենից լավ պահպանված աշտարակը պատի միջին մասում տեղադրված է, որի քարերի մշակման ձևը տարբեր է և կրկնում է Կիլիկյան ամրոցներում լայն տարածում ստացած պատերի քարերի ինքնատիպ տաշվածքը (Յիլան, Սինապ, Սադի Չիչեք, Փայաս, տե՛ս THE FORTIFICATIONS OF ARMENIAN CILICIA. ROBERT W. EDWARDS, WASHINGTON, D. C. 1987):


Բոլոր աշտարակների առանցքով եղել են դիտանցքներ՝ ուղղանկյուն, կամարակապ և դեպի ներս լայնացող հորինվածքով: Վանքամրոցի մարտահարթակը ծառայել է որպես հարավային պարսպապատին կից և ամբողջ երկարությունը ընթացող աշխարհիկ ու ռազմական բնույթի կառույցների շարքի ծածկ: Այս հատվածի պարիսպի վերին մասերը շեն պահպանվել, ուստի դժվար է պատկերացում կազմել հրականատների տիպի և նրանց դասավորության վերաբերյալ:

Շատինի վանքամրոցը ռազմարվեստի առումով հետաքրքիր և յուրօրինակ նմուշ է, որը Սյունիքի ու միջնադարի այդ տիպի պաշտպանական կառույցներից համեմատաբար լավ պահպանվածներից է:



ՍՈՒԼԵՄԱ (Սելիմի) բերդ: Սուլեմա բերդը դիրքադրված է ռազմաստրատեգիական հույժ կարևոր տեղում, Սելիմի լեռնանցքի բարձրադիր լեռան վրա Սուլեմա գետի և համանուն ձորի աջակողմում, որտեղով անցել է Դվին—Պարտավ ռազմաառևտրական ճանապարհի Սյունիքով անցնող գծամասը և միևնույն ժամանակ հանդիսացել է Սյունիքի Գեղարքունիք և Վայոց ձոր գավառների սահմանամերձ ամրոցը: Ամրոցի մասին հիշատակություն է թողել Սա. Օրբելյանը, կապված 364 թվականին Հայոց Կաթողիկոս Ներսես Ա. Մեծի Կեսարիա ուղեկցող իշխանների հետ, որոնք, ըստ պատմիչի, վերադարձի ճանապարհին, սբ. Մամասի մասունքները բերել և ամփոփել են Սուլեմա անա-

²⁴ Մ. Հասարթյան, Սյունիքի 17—18-րդ դարերի ճարտարապետական համալիրներ, Եր., 1978, էջ 90:

ՏՎԵՏՈՒՄ




ԳՅԱԳԻՐ 1. ԳԻՆ-ՊԱՐՏԱԿ ՃԱՆԱՊԱՐԳԸ




ԳՅԱԳԻՐ 2 ՊԼՅԱՆՈՐԱԾԵՆ-ԿՈԹ ՃԱՆԱՊԱՐԱԿԱԿՏԿԱԾԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՏՎԵՏՎԿ 2



ԳՅՈՒԳԻ 1. ԱՐԸ ԱՐՐՈՒ ԿՐԻ-ԱՐՄ ԿԱՏՎՈՅ
ՔԿԱԳՐՈՒՅՈՒՆԸ և Կ ՋԱՅԱՒ, ՄԱՆԱԾՈՒՅՈՒՆՍԸ և ԱՐԱԳՅՈՋՅԱՆ և ԿԱԳՆՐՅԱՆ



ԳՅՈՒԳԻ 2. ԸՍՏԻ ԱՆԵՂՄՐՈՆ


ՏՎԻՏՎԻՅ




1 ԱՐՐԱ Բ.




2 ՀԱՐՍՅԱԿ Բ.



3 ՎԱՅՍ, ՄԵՅ ՂԱԼԱ Բ.



4 ՎԱՅՍ, ԿՈՐԻ ՂԱԼԱ Բ.



5 ԿՐԻՍՏՈՒՆՈՐ Բ.



6 ԿՐԻՍՏՈՒՆՈՐ Բ.



7 ԶԵՆՈՒ Բ.



8 ՍՈՒՐԵՆՈՒՆ Բ. ԼՈՒՐՆԱԿՆԻ ԶԱՆՍՈՒՄ

օրիկ գոյակի մոտ²⁵, Պատմիչն ամրոցն անվանում է «գղեկին Սուլեմայ ի ժա-
 մանակս թագաւորութեան Հայոց ցեղին Արշակունեաց...»²⁶: Ամրոցի կառու-
 ցումը վերագրվում է Սուլեմայ անունով իշխանին. «... ի վաղ ժամանակս
 ի Սուլեմայ տանուտեառնէ շինեալ»²⁷: Այս տեղեկութիւններից ճշտվում է
 այն հանգամանքը, որ ամրոցը գոյութիւն է ունեցել Արշակունիների շրջա-
 նում և այն կառուցել կամ վերակառուցել է Սուլեմա իշխանը, և որ ամրոցը
 դիտվել է որպէս գոյակ տիպի պաշտպանական կառուցոյ: Սուլեմա ամրոցի
 մասին հետագայում մեր պատմիչները լռում են: Այսօրվա վիճակով ամրոցը
 խիստ ավերակ վիճակում է: Դոյակ լինելու հանգամանքը կարելի է նկատել
 միայն պաշտպանական կառուցցի ընդհանուր դիրքից ելնելով (տախտակ 3,
 նկ. 8): Այն կառուցվել է լեռան գագաթ հանդիսացող, ուղղահայաց ժայռա-
 պատերով դեպի վեր խոյացող հրվանդանի վրա, որն իր շրջապատի նկատ-
 մամբ գերիշխող դիրքի շնորհիվ հսկողութեան տակ է պահել նահանգի խիստ
 կարևոր հանգույցը: Ամրոցի տարածքում պահպանվել են որոշ պարսպա-
 պատերի հետքեր, շարված անմշակ քարերից, առանց շաղախի: Յավոք այս
 ավերակները շին կարող պատկերացում տալ ամրոցի կառուցապատման, շի-
 նարարական և ճարտարապետական լուծումների մասին: Սուլեմա գոյակին
 հարակից տարածքում կան մի քանի կառուցների ավերակներ, որոնցից առա-
 վել նշանակալիցն ու համեմատաբար լավ պահպանվածներից են՝ հյուսիսում
 Սելիմի և հարավում Աղբենդի քարվանատները: Այս քարվանատները ուսում-
 նասիրված և մեկնաբանված են, ուստի կանգ չենք առնի վերլուծութեան վրա:
 Հարկ ենք համարում նշել, որ Սուլեմա գոյակից, որը հսկում էր նրա ստո-
 բոտով անցնող Սյունիքի կարևոր ճանապարհը, հյուսիս և հարավ 13—14-րդ
 դդ. կառուցված երկու քարվանատները ունեցել են ոչ միայն իրենց ֆունկ-
 ցիային բնորոշ նշանակութիւն, այլ նաև ռազմավարական նպատակներ ու
 տեղադրվել են միասնական մտահղացմամբ:

Ամփոփելով, նշենք, որ միջին դարերում Սյունիքում կառուցվող, նորոգ-
 վող և հիմնովի վերակառուցվող ամրոցները ծառայել են իշխանական առան-
 ձին տարածքների, երկրի ռազմական և առևտրական կարևոր նշանակութիւն
 ունեցող մայրուղու պաշտպանութեանն ու հսկողութեանը, և բոլոր պաշտպա-
 նական կառուցներն իրագործվել են մեկ ընդհանուր, համապետական, ռազ-
 մավարական ծրագրի համաձայն:

А. А. Зарян—Оборонительная система отрезка Шарури дашт—Се-
 лимский перевал дороги Двин-Партав.—Дорога Двин-Партав, часть ко-
 торой проходила по провинции Сюник (уезд Вайоц дзор), имела важ-
 ное торговое значение для страны и во времена правления сюникских
 князей использовалась как стратегическо-оборонительная система ре-
 гиона. Нами была поставлена цель изучить 92 км отрезок от н. п. Улья-
 Норашен до Селимского перевала с тем, чтобы выявить до сих пор со-
 хранившиеся оборонительные сооружения, расположенные вдоль всей
 протяженности этого пути. Благодаря историческим данным, разыс-
 каниям современных ученых и нашим исследованиям на местах раз-
 валин крепостей стало возможным восстановить месторасположение
 отдельных фортификационных сооружений вдоль изучаемой дороги.
 Все эти оборонительные сооружения служили для охраны, контроля
 и обороны важной артерии, а все фортификационные сооружения были
 реализованы как единая государственная стратегическая программа.

²⁵ Ստ. Օրբելյան, Աշվ. աշխ., էջ 288, Ղ. Ալիշան, Աշվ. աշխ., էջ 163, Հ. Միքայել Հով-
 հանգունան, Աշվ. աշխ., էջ 888:

²⁶ Մտերի. Օրպելյան, Պատմ. Նահանգից Սիսական, Փարիզ, 1859, Բ. Ա, էջ 52:

²⁷ Ղ. Ալիշան, Աշվ. աշխ., էջ 164: